

ԴՐՈՒԱԳ Ե.

Ա. Գոհաբանություն վասն թագընկալությանն.

Յետ թագընկալութեանն՝ միւս եւս հանդէս շքով կատարեաց Լեւոն, զմկրտութիւն թոռնեկին իւրոյ՝ Ռուբինի-Ռեմունդի ժառանգին Անտիոքայ, ՚ի ձեռն պսակողին իւրոյ՝ արքեպիսկոպոսին Մոգունտիոյ. զի եւ ըստ եկեղեցական իրաւանց՝ յանկագոյն էր սմա կատարել զխորհուրդն, ՚ի հօրէ լատին գոլով երախային։ Մեծամեծ պատիւս եւ պարգեւս ընկալաւ, որպէս արժանն պահանջէր, նուիրակս այս Քահանայապետին եւ կայսեր, ՚ի թագաւորէ Լեւոնէ եւ ՚ի կաթողիկոսէն Գրիգորէ. զորոց եւ գրով եւ բանիւ ծանուցանէր առ Իննովկենտ Գ, յորժամ թղթովք թագաւորին եւ կաթողիկոսին առաքեցաւ առ նա, եւ առանձինն իբրեւ դեսպան ՚ի Լեւոնէ. վասն որոյ եւ Քահանայապետն գոհութեամբ յիշէր զայս առ Լեւոն։ Թուղթ սորա (Լեւոնի) թուեալ է ՚ի 23 մայիսի տարւոյն (1199). ՚ի նմին աւուր թուի գրեալ եւ կաթողիկոսին (զի պակասէ ՚ի պատճենի սորին՝ թուականն), որոց երկոցուն եւս պահին լատին թարգմանութիւնք հնագիրք ՚ի դիւանս Վատիկանի, հայերէն բնագրացն անհետ գոլով։ Վայելուչ է սկիզբն կաթողիկոսական թղթոյն, ողջունելով ոչ լոկ զՔահանայապետն, այլ եւ զդասս ուխտի եկեղեցոյ նորա, որում ընծայէ եւ զինքն որդի, եւ մաղթէ ՚ի պահպանութիւն նոցին. ծանուցանելով, Ա. զգալուստ արքեպիսկոպոսին Մոգունտիոյ եւ բերել թագ իբրեւ առ ՚ի յԱստուծոյ, ՚ի Քահանայապետէն եւ ՚ի կայսերէ Հռովմայեցոց⁹⁹, վասն որոյ եւ երեցուն գոհութիւն. Բ. զի եբեր մատոյց նա զպայմանսն կամ զպատուէրս (præcepta) Պապին, եւ ընկալաւ ինքն եւ ուխտ եկեղեցոյ իւրոյ հաւանութեամբ եպիսկոպոսացն, որք սփռեալ են ընդ ամենայն երկիր, եւ բազումք են շնորհօքն Աստուծոյ. (Qui sunt in multis terris et sunt multi per Dei gratiam). եւ զի այսուհետեւ մեք ձեր եմք եւ դուք մեր, ասէ, Գ. պարտիք տալ մեզ օգնութիւն, զի ՚ի վիշապաց թշնամեաց միջի պաշարեալ կամք։ Ի ծանօթութիւն ոգւոյ եւ ոճոյ Լեւոնի

⁹⁹ «Noveritis, Domine, quod ad nos venit nobilis, sapiens et sublimis Archiepiscopus Moguntinus, qui ad nos attulit ex parte Dei, et ex parte sublimitatis Ecclesiæ Romanæ, et ex parte magni Imperatoris Romanorum sublimem Coronam, et coronavit Regem nostrum Leonem.